**Հավելված 5**

**«ԷԱՃԱՊՁԲ ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01 »* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01-1**

ք. Երևան

____/____________/2021թ.

« Կադաստրի կոմիտե »-ը ի դեմս Արթուր Թովմասյան ի, որը գործում է « Կադաստրի կոմիտե »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « Բեսթ Սոֆթ ՓԲԸ »-ը, ի դեմս տնօրեն Հարություն Մարգարյան ի, որը գործում է « Բեսթ Սոֆթ ՓԲԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի (ARPIS) քարտեզագրական բաղադրիչում կատարվող փոփոխությունների իրականացման ծառայություններ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Digitally signed by
TOVMASYAN
ARTUR
3012780068
Date: 2021.04.30
12:49:14 AMT

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում

նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

**2.4 Կատարողը պարտավոր է`**

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը` ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք` յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում`

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած` փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում,

հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9800000.00 AMD(իննը միլիոն ութ հարյուր հազար դրամ ) ՀՀ դրամ:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման

արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:8

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը* [5]։

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման

նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կատարողի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են

բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները` նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով` հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

13[8]

_

_

8. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ** **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**Կադաստրի կոմիտե** | **Բեսթ Սոֆթ ՓԲԸ**
**Արշակունյաց 7** | **Չարենցի 1**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **Ամերիաբանկ**
**900011030815** | **1570004845660100**
**02534328** | **01568139**

| | |
|---|---|
| **Կադաստրի կոմիտե** | **Բեսթ Սոֆթ ՓԲԸ** |
| **Արշակունյաց 7** | **Չարենցի 1** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **Ամերիաբանկ** |
| **900011030815** | **1570004845660100** |
| **02534328** | **01568139** |
| **--------------------------------** | **--------------------------------** |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Digitally signed by MARGARYAN HARUTYUN 2504800398
Date: 2021.04.28 16:39:50 AMST

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

17[6]*Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփաստաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր*

[17]*Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[8]*Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույն կետըհանվումէնախագծից:*

[9]*Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որի շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամոչպատշաճկատարմանհանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[10]*Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունըպայմանագրիցհանվումէ:*

[11] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[12]*Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[13]*Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/____________/2021թ. կնքված
ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 48981300/1 | Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի (ARPIS) քարտեզագրական բաղադրիչում կատարվող փոփոխությունների իրականացման ծառայություններ | 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1.1. Սույն բնութագրով սահմանվում են Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի (ARPIS) քարտեզագրական բաղադրիչում կատարվող փոփոխությունների տեխնիկական պահանջները: 1.2. Էլեկտրոնային համակարգերում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն` հաշվի առնելով այդ համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները: 1.3. Կատարողը անհրաժշտության դեպքում պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային փոփոխությունների մասով աշխատակազմի վերապատրաստում: 2. ARPIS համակարգի քարտեզագրական բաղադրիչում կատարվող փոփոխություններ 2.1 Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ծրագրային թերությունների և բացթողումների շտկում. Թերությունները և բացթողումները տարանջատվում են երկու տեսակի՝ անհետաձգելի շտկում պահանջող թերություններ և համակարգի աշխատանքի տրամաբանական սխալների շտկման հետ կապված թերություններ: Անհետաձգելի շտկում պահանջող թերություններ են համարվում համակարգի աշխատանքի այն խուչընդոտները, որոնց առկայությունը խաթարում է համակարգի միջոցով կատարվող ընթացիկ գործառույթների իրականացումը: Անհետաձգելի շտկում պահանջող թերությունները պետք է շտկվեն 24 ժամվա ընթացքում 2.2 Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում 2.3 Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված պայմաններով համակարգում մուտքագրված քարտեզի պռոցեսների տարբեր փուլերի ավտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում 2.4 Պատվիարտուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականցման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում 2.5 Պատվիրատուի պահանջով համակարգում ձևավորվող հաշվետվությունների ձևաթղթերի փոփոխությունների կատարում 2.6 Պատվիրատուի պահանջով համակարգում քարտեզների վրա կատարված գործողությունների վերծանումների տրամադրում 2.7 Պատվիրատուի պահանջով համակարգում առաջացած խոտանված տվյալների մշակում 2.8 Համակարգում քարտեզի գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խուչընդոտների կարգաբերում և թերությունների վերացում 2.9 Անհետաձգելի շտկում պահանջող թերությունների ի հայտ գալու դեպքում Էլեկտրոնային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համակարգի սպասարկումը պետք է իրականացվի նաև ոչ աշխատանքային օրերին՝ համակարգում կիրառվող ցանցային եղանակով սպասարկվող այլ ծառայությունների հետ աշխատանքը չընդհատելու նպատակով 2.10 Համակարգում ծրագրային փոփոխություններ իրականացնելու դեպքում այն նախ պետք է տեղադրել Կադաստրի կոմիտեի քարտեզագրական մոդուլի թեստային միջավայրում, որտեղ թեստավորումից հետո, պատվիրատուի համաձայնության դեպքում տեղադրել այն քարտեզագրական մոդուլի հիմնական միջավայրում 2.11 Կատարել տվյալների բազաների սինխրոնիզացիա ARPIS համակարգի քարտեզագրական բաղադրիչի տվյալների բազայից դեպի գեոպորտալ և e-cadastre.am կայքում գործող տվյալների բազա 2.12 Կասեցման և մերժման հաշվետվության փոփոխություն՝ 2.13 Քարտեզի տվյալների մուտքագրում ARPIS: Քարտեզներում կատարված խմբագրական արդյունքում կադաստրային գործում ավելացվում է հողամասի և շենքի կադաստրային ծածկագրերը և մակերեսը: Անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն նաև հողային ֆոնդի, գնահատման խմբի, Գնահատման գոտի ավելացման համար: Սա պարտադիր պահանջ չէ լրացման համար: Պետք է լինի ընտրության հնարավորություն: 2.14 Հաշվետվություններ: Անհրաժեշտ է ներդնել պարզագույն հաշվետվությունների գեներատոր: Օրինակ՝ ընտրում ենք համայնքը (համայնքներ, մարզ), շերտը (օրինակ՝ հողային ֆոնդ) և ստանանք հաշվետվություն որտեղ կարտացոլվի ընդհանուր մակերեսը համապատասխան շերտի տեսակի և ենթատեսակների համաձայն: Համայնք (ներ)՝ Կոտայքի մարզի Աբովյան, Արզնի Գյուղատնտեսական հողեր – 400 հա որից՝ վարելահող – 100 հա խոտհարք – 300 հա Բնակավայրերի հողեր – 800 հա որից՝ բնակելի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կառուցապատման – 500 հա հասարակական կառուցապատման – 300 հա և այլն: Հաշվետվությունները պետք է կազմվեն նաև մի քանի շերտի համադրությամբ: Օրինակ ընտրում ենք հողային ֆոնդը և սեփականության տեսակը: 2.15 Որևէ պարամետրով անշարժ գույքերի միավորների փնտրման արդյունքը պետք է հնարավոր լինի արտահանել ցանկի միջոցով, ինչպես նաև տեքստային բազային տեղեկատվության հետ կապակցման հնարավորությամբ: Ներկայումս ստանում ենք կադաստրային ծածկագրերի ցանկը և մակերսները, սակայն EXCEL ձևաչափով արտահանելու հնարավորություն չկա: Տեքստային բազայից անհրաժեշտ է ընտրության հնարավորությամբ արտահանվեն անշարժ գույքի որակական և քանակական տվյալնեը, գրանցված սուբյեկտները և այլն: 2.16 Անհրաժեշտ է ներդնել հաշվետվության տեսակ, որտեղ կարտահայտվեն տեքստային բազայում առկա, սակայն քարտեզում բացակայող կադաստրային միավորները, մակերեսի, հողատեսքի և սուբյեկտի, գնահատման խմբի, գնահատման գոտու տարբերությունը: Պետք է ընտրվի համայնքը և աղյուսակի տեսքով ցուցադրվեն ընտրված պարամետրերով հայտնաբերված սխալները: 2.17 Պետական գրացնման համար ներկայացված դիմումը 2.17.1 եթե մերժվել կամ կասեցվել է քարտեզագրող մասնագետի կողմից, ապա քարտեզի պրոցեսը ավարտվում է առանց փոփոխությունները ֆիքսելու 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ 3.1 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո տասնօրյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ փաստաթղթային եղանակով համաձայնեցնի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները (90 օր): 3.2 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների արդյունքում մշակված ծրագրային ապահովման ընդլայնումները պետք է հանձնվեն Պատվիրատուին ըստ պատրաստվածության աստիճանի՝ նախապես համաձայնեցված ժամկետներում: 3.3 Կատարողը չի կարող որևէ այլ կերպ փոփոխության ենթարկի Էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովումը, քան դա անհրաժեշտ է սույն տեխնիկական բնութագրով անհրաժեշտ լրացումների իրականացման համար: 3.4 Կատարողը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից տրամադրված փորձարկման ենթակառուցվածքում Կատարողի կողմից իրականացված յուրաքանչյուր ընդլայնման՝ որպես Էլեկտրոնային համակարգի բաղկացուցիչ մասի փորձարկումը: 3.5 Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրոնային ծառայությունների ներդրման հետ կապված ցանցային ծրագրային կարգաբերումները: 3.6 Աշխատանքների վերջում Կատարողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերվող բոլոր տվյալները և ծրագրային փոփոխությունների կոդերը ելակետային նյութերը /source code/ Կցված է 52b0d80b.docx |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Կադաստրի կոմիտե**

**Հասցե՝ Արշակունյաց 7**

**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

**ԿԱՏԱՐՈՂ**

**Բեսթ Սոֆթ ՓԲԸ**

**Հասցե՝ Չարենցի 1**

**Ամերիաբանկ**

900011030815

02534328

Արթուր Թովմասյան

___________

/ստորագրություն/

Կ.Տ

1570004845660100

01568139

Հարություն Մարգարյան

___________

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
____/____________/2021թ. կնքված
ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | հասցեն | Ժամկետը** |
| դրամ | 9800000.00 | 9800000.00 | 1 | ք. Երևան, Կոմիտաս 35/2 | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից 90 օր |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Կադաստրի կոմիտե** | **Բեսթ Սոֆթ ՓԲԸ** |
| **Հասցե` Արշակունյաց 7** | **Հասցե` Չարենցի 1** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **Ամերիաբանկ** |
| **900011030815** | **1570004845660100** |

**02534328**

**Արթուր Թովմասյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**01568139**

**Հարություն Մարգարյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Հավելված N 3
____/____________/2021թ. կնքված
ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 1 | 48981300/1 | Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի (ARPIS) քարտեզագրական բաղադրիչ | | | | | | | 2940000.00 | 5880000.00 | 9800000.00 | 9800000.00 | 9800000.00 | 9800000.00 | 9800000.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ում կատարվող փոփոխությունների իրականացման ծառայություններ | | | | | | | | | | | | | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:

** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Կադաստրի կոմիտե**

**Հասցե` Արշակունյաց 7**

**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

**900011030815**

**02534328**

**Արթուր Թովմասյան**

**____________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**

**Բեսթ Սոֆթ ՓԲԸ**

**Հասցե` Չարենցի 1**

**Ամերիաբանկ**

**1570004845660100**

**01568139**

**Հարություն Մարգարյան**

**____________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Հավելված N 4
____/____________/2021թ. կնքված
ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________________________ | ________________________________ |
| ________________________________ | ________________________________ |
| գտնվելու վայրը __________________ | գտնվելու վայրը __________________ |
| հհ __________________ | հհ __________________ |
| հվհհ __________________ | հվհհ __________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`

________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «__________________» 20__թ.
Պայմանագրի համարը` ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_______________» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները`

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տե | 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1.1. Սույն բնութագրով սահմա | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ղեկատվական համակարգի (ARPIS) քարտեզագրական բաղադրիչում կատարվող փոփոխությունների իրականացման ծառայություններ | նվում են Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի (ARPIS) քարտեզագրական բաղադրիչում կատարվող փոփոխությունների տեխնիկական պահանջները: 1.2. Էլեկտրոնային համակարգերում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն` հաշվի առնելով այդ համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները: 1.3. Կատարողը անհրաժշտության | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դեպքում պետք է ապահովի սույն տեխ նիկական բնութագր ով նախա տեսված ծ րագրային փոփոխու թյունների մասով աշ խատակա զմի վերա պատրաս տում: 2. ARPIS համ ակարգի ք արտեզագ րական բ աղադրիչո ւմ կատար վող փոփո խություննե ր 2.1 Հա մակարգի աշխատա նքի ընթա ցքում առ աջացող ծ րագրային թերությու նների և բ ացթողում ների շտկում. Թ երություն ները և բա ցթողումն երը տար անջատվո ւմ են երկու | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեսակի` անհետաձգելի շտկում պահանջող թերություններ և համակարգի աշխատանքի տրամաբանական սխալների շտկման հետ կապված թերություններ: Անհետաձգելի շտկում պահանջող թերություններ են համարվում համակարգի աշխատանքի այն խոչընդոտները, որոնց առկայությունը խաթարում է համակարգի միջոցով կատարվող ընթացիկ գործառույթների իրականացումը: Անհետաձգելի շտկում պ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ահանջող<br>թերությու<br>նները<br>պետք է<br>շտկվեն 24<br>ժամվա ըն<br>թացքում<br>2.2 Պատվ<br>իրատուի<br>պահանջո<br>վ և պատվ<br>իրատուի<br>տրամադր<br>ված տվյա<br>լների սահ<br>մաններու<br>մ համակ<br>արգի տվյ<br>ալների շտ<br>եմարանն<br>երում փո<br>փոխությո<br>ւնների և<br>(կամ) լրա<br>ցումների<br>իրականա<br>ցնում 2.3<br>Պատվիրա<br>տուի պահ<br>անջով և<br>պատվիր<br>ատուի տր<br>ամադրվա<br>ծ պայման<br>ներով հա<br>մակարգու<br>մ մուտքա<br>գրված<br>քարտեզի<br>պռոցեսնե<br>րի<br>տարբեր<br>փուլերի ա | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում 2.4 Պատվիրատուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականցման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում 2.5 Պատվիրատուի պահանջով համակարգում ձևավորվող հաշվետվությունների ձևաթղթերի փոփոխությունների կատարում 2.6 Պատվիրատուի պահանջով համակարգում քարտեզ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ների վրա<br>կատարվ<br>ած գործո<br>ղություն<br>երի վերծ<br>անումներ<br>ի տրամա<br>դրում 2.7<br>Պատվիրա<br>տուի պահ<br>անջով հա<br>մակարգու<br>մ առաջա<br>ցած խոտ<br>անված տ<br>վյալների<br>մշակում<br>2.8 Համա<br>կարգում<br>քարտեզի<br>գործառույ<br>թների իր<br>ականացմ<br>ան ընթաց<br>քում առա<br>ջացող<br>ընթացիկ<br>խուչընդոտ<br>ների կար<br>գաբերում<br>և թերությ<br>ունների<br>վերացում<br>2.9 Անհետ<br>աձգելի<br>շտկում պ<br>ահանջող<br>թերությու<br>նների ի<br>հայտ<br>գալու<br>դեպքում Է<br>լեկտրոնա | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | յին համա կարգի սպ ասարկում ը պետք է իրականա ցվի նաև ոչ աշխա տանքայի ն օրերին՝ համակար գում կիրառվող ցանցային եղանակո վ սպասա րկվող այլ ծառայությ ունների հետ աշխ ատանքը չ ընդհատել ու նպատ ակով 2.10 Համակար գում ծրագ րային փո փոխությո ւններ իրա կանացնել ու դեպքում այն նախ պետք է տեղադրել Կադաստր ի կոմիտեի քարտեզա գրական մոդուլի թեստային միջավայր ում, | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | որտեղ թե<br>ստավորու<br>մից հետո,<br>պատվիր<br>ատուի հա<br>մաձայնու<br>թյան<br>դեպքում<br>տեղադրել<br>այն քարտ<br>եզագրակ<br>ան<br>մոդուլի հի<br>մնական մ<br>իջավայրո<br>ւմ 2.11<br>Կատարել<br>տվյալներ<br>ի բազանե<br>րի սինխր<br>ոնիզացի<br>ա ARPIS հ<br>ամակարգ<br>ի քարտեզ<br>ագրական<br>բաղադրիչ<br>ի տվյալնե<br>րի<br>բազայից<br>դեպի գեո<br>պորտալ և<br>e-cadastre<br>.am<br>կայքում<br>գործող տ<br>վյալների<br>բազա<br>2.12 Կասե<br>ցման և<br>մերժման<br>հաշվետվո<br>ւթյան փո<br>փոխությո | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ն` 2.13 Քարտեզի տվյալների մուտքագրում ARPIS: Քարտեզներում կատարված խմբագրական արդյունքում կադաստրային գործում ավելացվում է հողամասի և շենքի կադաստրային ծածկագրերը և մակերեսը: Անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն նաև հողային ֆոնդի, գնահատման խմբի, Գնահատման գոտի ավելացման համար: Սա պարտադիր պահանջ չէ լրացման համար: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պետք է լինի ընտրության հնարավորություն: 2.14 Հաշվետվություններ: Անհրաժեշտ է ներդնել պարզագույն հաշվետվությունների գեներատոր: Օրինակ՝ ընտրում ենք համայնքը (համայնքներ, մարզ), շերտը (օրինակ՝ հողային ֆոնդ) և ստանանք հաշվետվություն որտեղ կարտացոլվի ընդհանուր մակերեսը համապատասխան շերտի տեսակի և ենթատեսակների համաձայն: Համայնք (ներ)՝ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կոտայքի մարզի Աբովյան, Արզնի Գյուղատնտեսական հողեր – 400 հա որից՝ վարելահող – 100 հա խոտհարք – 300 հա Բնակավայրերի հողեր – 800 հա որից՝ բնակելի կառուցապատման – 500 հա հասարակական կառուցապատման – 300 հա և այլն։ Հաշվետվությունները պետք է կազմվեն նաև մի քանի շերտի համադրությամբ։ Օրինակ ընտրում ենք հողային Ֆոնդը և սեփականո | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ության տեսակը: 2.15 Որևէ պարամետրով անշարժ գույքերի միավորների փնտրման արդյունքը պետք է հնարավոր լինի արտահանել ցանկի միջոցով, ինչպես նաև տեքստային բազային տեղեկատվության հետ կապակցման հնարավորությամբ: Ներկայումս ստանում ենք կադաստրային ծածկագրերի ցանկը և մակերսները, սակայն EXCEL ձևաչափով արտահանելու հնարավորություն չկա: Տ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | եքստային բազայից անհրաժեշտ է ընտրության հնարավորությամբ արտահանվեն անշարժ գույքի որակական և քանակական տվյալները, գրանցված սուբյեկտները և այլն: 2.16 Անհրաժեշտ է ներդնել հաշվետվության տեսակ, որտեղ կարտահայտվեն տեքստային բազայում առկա, սակայն քարտեզում բացակայող կադաստրային միավորները, մակերեսի, հողատեսքի և սուբյեկտի, գնահատման խմբի, գնահատմ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ան գոտու տարբերությունը: Պետք է ընտրվի համայնքը և աղյուսակի տեսքով ցուցադրվեն ընտրված պարամետրերով հայտնաբերված սխալները: 2.17 Պետական գրացնման համար ներկայացված դիմումը 2.17.1 եթե մերժվել կամ կասեցվել է քարտեզագրող մասնագետի կողմից, ապա քարտեզի պրոցեսը ավարտվում է առանց փոփոխությունները ֆիքսելու 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ 3.1 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո տասնօրյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ փաստաթղթային եղանակով համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատես | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները (90 օր): 3.2 Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների արդյունքում մշակված ծրագրային ապահովման ընդլայնումները պետք է | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հանձնվեն Պատվիրա տուին ըստ պատ րաստված ության ա ստիճանի` նախապե ս համաձ այնեցված ժամկետն երում: 3.3 Կատարող ը չի կարող որևէ այլ կերպ փո փոխությա ն ենթարկի Էլեկտրոն ային համ ակարգի ծ րագրային ապահովո ւմը, քան դա անհր աժեշտ է սույն տեխ նիկական բնութագր ով անհրա ժեշտ լրաց ումների ի րականաց ման համար: 3.4 Կատա րողը պետք է ապահովի Պատվիրա տուի | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կողմից տրամադրված փորձարկման ենթակառուցվածքում Կատարողի կողմից իրականացված յուրաքանչյուր ընդլայնման՝ որպես Էլեկտրոնային համակարգի բաղկացուցիչ մասի փորձարկումը: 3.5 Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրոնային ծառայությունների ներդրման հետ կապված ցանցային ծրագրային կարգաբերումները: 3.6 Աշխատանքների | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերջում Կատարողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերվող բոլոր տվյալները և ծրագրային փոփոխությունների կոդերը ելակետային նյութերը /source code/(Կցված է 52b0d80b.docx) | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| | |
|---|---|
| **Ծառայությունը հանձնեց** | **Ծառայությունն ընդունեց** |
| ____________________________ | ____________________________ |
| **ստորագրություն** | **ստորագրություն** |
| ____________________________ | ____________________________ |
| **ազգանուն, անուն** | **ազգանուն, անուն** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված N 4.1
____/____________/2021թ. կնքված
ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Կադաստրի կոմիտե -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Բեսթ Սոֆթ ՓԲԸ (այսուհետ՝ Կատարող)

միջև 20__թ._______________________________ -ին կնքված N ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/01-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. ___________________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի (ARPIS) քարտեզագրական բաղադրիչում կատարվող փոփոխությունների իրականացման ծառայություններ | դրամ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________________________

**ազգանուն, անուն**

____________________________________

**Ստորագրություն**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________________________

**ազգանուն, անուն**

_____________________________________

**Ստորագրություն**